

ԿՈՄԻՏԱՍ 100

1969 թ. նոյեմբերի 21-ին Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, կայացավ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի հանդիսավոր նիստը՝ նվիրված հայ մեծ կոմպոզիտոր Կոմիտասի ծննդյան հարյուրամյակին: Նիստը բացեց հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանը:

Ստորև տպագրում ենք Ն. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ բացման խոսքը:

Թանկագին ընկերնե՛ր, հարգելի հյուրե՛ր.

Այսօր մենք նշում ենք հայ ժողովրդի հոգևոր փառքի, նրա նվիրական զգացմունքների ու խոհերի հանճարեղ երգիչ մեծ Կոմիտասի ծննդյան հարյուրամյակը: Այն մարդու, որն իր անմահ ստեղծագործությամբ քայլեց դեպի համամարդկային մշակույթի բարձունքները և կանգնեց այն մեծերի շարքում, որոնք հավիտենական լույս են փռում սերունդների ճանապարհին:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ Կոմիտասը մի նոր հայտնություն էր, որը ծնվեց կյանքի թելադրանքով, ծնվեց մեր ժողովրդի հոգևոր հարստությունների ընդերքից, ծնվեց, որպեսզի իր ժողովրդի դարավոր երգերը հավաքի, մշակի ու կերտի և մտնի համաշխարհային մշակույթի հերկը և այնտեղ մեր նոր դասական երաժշտության խոր ու ինքնատիպ ակոսը բացի:

Կոմիտասը բացեց այդ ակոսը, բացեց ու դարձավ մեր ազգային նոր երգարվեստի սերմնացանը:

Հազարամյակների ճանապարհներով է անցել հայ երգը, և այդ ճամփեքին ամեն մի դար իր դրոշմն է դրել նրա վրա:

Պիտի աշխարհ գար այն մարդը, որը կարողանար մեր ժողովրդի վաղնջական երգը սրբել այդ ճամփաների փոշուց, մաքրել օտարամուտ խորթ հընչյուններից, որոնք շերտ-շերտ կեղևել էին նրան այն դարերի ընթացքում, երբ հայ մարդը ստիպված էր պահպանել իր երգը անողոք կորստից:

Պիտի աշխարհ գար այն մարդը, որը կարողանար կամուրջ կապել հայ երգի հինավուրց ու նոր ափերի միջև: Եվ ստեղծագործական այդ սխրանքի, այդ առաքելության համար նա պետք է իր մեջ մարմնավորեր իր ժողովրդի հազարամյա հոգևոր կյանքը, ճանաչեր և ապրեր ժողովրդի, աշխատավոր մարդու հոգսերով ու ձգտումներով, ճանաչեր ու սիրեր իր երկիրն ամբողջ՝ նրա հողն ու երկինքը, նրա հուրն ու ջուրը, նրա սարերն ու հանդերը:

Այդ մարդը եղավ մեր Կոմիտասը:

Եվ հնչեց լայնաշունչ հայկական երգն ու երաժշտությունը նրա կազմակերպած երգչախմբերի շուրթերով, հնչեց որպես կանչ շինականի, որպես աշխատավոր ժողովրդի մարդախոս սիմֆոնիա։

Հիմա կարելի էր աշխարհից-աշխարհ տանել այդ երգն ու երաժշտությունը, որովհետև այդ երգերում բաբախում էր ժողովրդի սիրտը, որովհետև նրա մեղեդիներում ապրում էր ժողովրդի հոգին, որովհետև նրա հնչյուններով խոսում էր ժողովրդի իմաստությունը։

Կոմիտասը երկրից-երկիր տարավ մեր երգն ու երաժշտությունը և իր կախարդող ձեռքերով ու անզուգական ձայնով հնչեցրեց աշխարհի երաժշտագիտության այնպիսի հռչակված կենտրոններում, ինչպիսիք են Միլանն ու ժնևը, Փարիզն ու Բեռլինը։ Մարդիկ իմացան ու ճանաչեցին մեր ժողովրդի ոչ միայն հնամենի խոսքն ու լեզուն, այլև նրա երգն ու երաժշտությունը, որը, առանց թարգմանի, այն օրերից մինչև այսօր էլ հնչում է աշխարհի ամենահեռավոր անկյուններում, հնչում է սրտահույզ ու խրոխտ, միաձայնելով իր մեջ խորապես ազգայինն ու համամարդկայինը և հենց դրանով էլ հասկանալի ու մոտ դառնում բոլորի համար։

Ահա թե ինչու ֆրանսիացի ականավոր կոմպոզիտոր Կլոդ Դեբյուսին, լսելով Կոմիտասի համերգ-դասախոսությունը Փարիզում, հիացմունքով ասաց. «Եթե Կոմիտասը ստեղծած լիներ միայն «Անտունին», դա բավական էր, որ նա մեծ երաժշտագետ համարվեր»։

Կոմիտասը հայտնագործեց հայկական ազգային մեղեդին, մեր երաժշտության խորիսխը, նա կարողացավ կամուրջ կապել ոչ միայն հայ երգի հինավուրց ու նոր ափերի միջև, այլև հայ երգի ու աշխարհի միջև։ Եվ դրանով էլ նա լուսավորեց այն տարածությունը, որը մեր երգարվեստը բաժանում էր աշխարհից, և դրանով էլ քաղաքակիրթ մարդկությանը մոտեցրեց մեր ժողովրդի մտքին ու սրտին։

Կոմիտասն իր ամբողջ կյանքը նվիրաբերեց մի ազնիվ ու վեհ գաղափարի՝ ստեղծել իր ժողովրդի բազմախորհուրդ էությանն արժանի ազգային երաժշտություն, որի մեջ մեր ժողովրդական երգն ու մեղեդին հյուսված լինեն պոլիֆոնիկ արվեստի բազմերանգ ձայնալարերով։ Կոմիտասը կատարեց իր այդ ուխտը, որովհետև նրան ուղեցույց եղավ իր իսկ այն սրբազան պատգամը, թե՝ «ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացեք և սովորեցեք նրանից»։

Կոմիտասը հայ երաժշտության ավանդույթներում պեղելով նրա ինքնատիպ մելոսը, գտնելով նրա պարզ ու ճշմարիտ ներդաշնակությունը, թրծեց այն ժամանակի ոգով ու շնչով՝ և դա բարձր ու կայուն պատվանդան դարձրեց մեր նոր օրերի ազգային երաժշտության համար, այն երաժշտության, որը արտահայտելով մեր ժողովրդի իմաստավոր անցյալն ու փառավոր ներկան, ծնունդ տվեց աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի հոյակապ գործերին, մեր տաղանդավոր երաժիշտների այն նոր ստեղծագործություններին, որոնք բարձրացան ու կանգնեցին նոր ժամանակների երաժշտական մշակույթի մեծարժեք գանձերի շարքում։

Կոմիտասի հանճարի լայնությունն ու խորությունը դրսևորվեց նաև նրանում, որ նա ոչ միայն օգտագործեց այն, ինչ երաժշտական արվեստի ասպարեզում արել էին իր երախտավոր նախորդները, այլև դիմեց ժամանակակից համաշխարհային երաժշտական մշակույթի բազմահարուստ փորձին, խորն ուսումնասիրեց նրա օրինաչափությունները և ստեղծագործաբար վերամաս-

տավորելով դրանք, կերտեց մեր այն կատարյալ, միանգամայն ուրույն ու դասական երաժշտությունը, որը հայ ժողովուրդն այսօր հպարտությամբ պարզում է աշխարհին։

Կոմիտասի մեծաստեղծ գործը, մոլորակի պես պտտվելով ժամանակի ու տարածության մեջ, ամեն անգամ իր նոր ու անսպասելի կողմերով է շրջվում դեպի մեզ ու բացում իր անսպառ գեղեցկությունը, իր անխամրելի հմայքը։

Դժվարին և ահեղ էր դարը և մեծ էր այն դաժանությունը, որը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բաժին ընկավ հայ ժողովրդին։ Մեծ եղեռնի մահաբեր մրրիկը ավերեց երկիրը հայոց, բնաջնջեց նրա բյուրավոր զավակներին և նույնքան հայերի էլ պոկեց իրենց մայրենի հողից և քշեց անլուր տառապանքի անապատներով։ Այդ ավերմունքի ճանապարհին ընկան հայ մշակույթի երախտավորներ Սիամանթոն ու Վարուժանը, Գրիգոր Զոհրապն ու Իսրբեն Սևակը։ Այդ ճանապարհին ապրող նահատակ դարձավ հայ երգի մեծ նորոգիչ մեր Կոմիտասը։

Բայց մի ժողովուրդ, որը մարդկությանը Խորենացու և Եղնիկի պես գիտնական միտք է տվել, իր նահատակություններն ու հոգու ալեկոծումները գեղանկարելու համար Եղիշեի ու Նարեկացու պես բանաստեղծ-փիլիսոփաներ և իր նվիրական ձգտումներն ու խոհերը երգելու համար Թումանյանի ու Կոմիտասի պես արվեստագետներ, այդպիսի մի ժողովուրդ չէր կարող մեռնել բռնի ուժի տակ, չէր կարող անհետանալ աշխարհից։ Եվ հայ ժողովուրդը չմեռավ, այլ ապրեց ու վերածնվեց, որովհետև իր բազմադարյան պատմության ամենաօրհասական պահին որդեգրեց իր գոյության ու հարատևության համար միակ փրկարար ծրագիրը՝ մեծ Հոկտեմբերի վեհ գաղափարներն ու սկզբունքները։

Հոկտեմբերի հրացոլքով փրկված Արևելյան Հայաստանը հայ ժողովրդի հերոսական աշխատանքով և ստեղծագործական խիզախումներով, լենինյան կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և մեր հայրենիքի եղբայրական ժողովուրդների դաշնությամբ դարձավ այն նորոգ ու գեղեցիկ երկիրը՝ Սովետական Հայաստանը, ուր այսօր ծաղկում է խաղաղ ու ապահով մի ներկա, մեծ ապագայով բեղուն մի իրականություն։

Հայոց հողում իրականություն դարձավ այն երազը, որ փայփայել էին մեր լուսավոր ու մեծ գործիչներ Աբովյանն ու Նալբանդյանը, Թումանյանն ու Կոմիտասը, նրանք, որ մեզ սրբորեն կտակեցին այն ավանդը, թե հայ ժողովրդի համար առանց Ռուսաստանի և ռուսական հեղափոխության փրկություն չկա, որ Ռուսաստանի հետ դաշինքի մեջ է մեր ժողովրդի գոյատևման և առաջադիմության երաշխիքը։ Այդ աշխարհաշեն հեղափոխության հանճարեղ առաջնորդը մեծ Լենինն էր, որի ամենահաղթ գիտական ուսմունքը արմատական շրջադարձ կատարեց ողջ մարդկության կյանքում, ազատության նոր այգ բերեց մեր երկրի բոլոր ժողովուրդներին և հայոց երկրին։

Ահա թե ինչու այս օրերին, Լենինի ծննդյան հարյուրամյակի նախօրյակին, մեր ժողովուրդը կրկին ու կրկին հաստատում է այն ճշմարտությունը, որ իր այսօրվա վերածնունդը, իր բարգավաճ ներկան ջերմացած է այդ հանճարեղ մարդու, այդ մեծ մտածողի կյանքի ու գաղափարների անմարելի լույսով։

Լենինյան ազգային իմաստուն քաղաքականության շնորհիվ էր, որ այս հիսուն տարում այնպես փարթամորեն ծաղկեց հայ արվեստը, այդ քաղաքականության շնորհիվ էր, որ իրականացավ նաև Կոմիտասի նվիրական երազներից մեկը՝ Հայաստանի մայր հողի վրա ստեղծվեցին երաժշտական մշա-

կույթի բազմաթիվ օջախներ, երաժշտական դպրոցներ ու ուսումնարաններ, որոնցից ամենաբարձրը՝ մեր մայրաքաղաքի կոնսերվատորիան, կրում է իր՝ Կոմիտասի անունը։

Ուրեմն եկեք բարի երթ և առավել բեղուն ապագա ցանկանանք մեր դարավոր հայոց երգին և մեր նոր երաժշտությանը։

Բազմախորհուրդ է, որ մեր ազգային երկու հանճարների՝ Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի հոբելյանները մենք նշում ենք այն ժամանակ, երբ Լենինի կրկնակի շքանշանակիր Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը ընթանում է դեպի իր փառապանծ հիսունամյակը, այն հիսունամյակը, որ մենք իրավամբ վերածնունդ ենք կոչում և ամենից առաջ նրա համար, որ վերածնվեց հայ ժողովրդի պետականությունը։

Հովհաննես Թումանյանը երազում էր տեսնել իր հայրենիքի նոր կյանքը, բայց նա այդ կյանքի միայն այգաբացը տեսավ։ Կոմիտասը դա էլ չտեսավ, որովհետև նրա տարագիր հոգուն արդեն խոր խավար էր իջել։ Մեծ երաժիշտն ու քաղաքացին չապրեց իր նորաստեղծ հայրենիքում, չապրեց նրա շինարար ու ստեղծագործ կյանքով, որի գալստյանը սպասում էր անհուն հավատով ու տենչանքով։

Թումանյանն ու Կոմիտասը մեզ հետ են մշտապես և ամենուր, մեզ հետ են իրենց իմաստուն խոսքով ու երգով, իրենց ազնիվ խորհրդով, մեզ հետ են ժողովուրդների դաշնության ու եղբայրության մասին իրենց արդար գաղափարներով։ Եվ նրանք մեզ մոտ են եկել ոչ միայն մեր անցյալից, այլ նաև մեր լուսավոր գալիքից, մեր ժողովրդի ապագայից։

Կոմիտասի հանճարը մոռացության գերեզման չունի, որովհետև նրա մեծագործությունը հաղթահարեց ժամանակի ու տարածության ամեն ինչ անհետացնող ուժը։ Այսօր էլ Կոմիտասը անմահ է, որովհետև նա ծնվում է մեր ամեն մի երգի հետ, խոյանում մեր մշակույթի ամեն մի կոթողի հետ, նոր կյանք է առնում և երկրից-երկիր անցնում մեր արվեստի ու երաժշտության ամեն մի նոր ու մեծ գործի հետ։

Ահա թե ինչու այնքան թարմությամբ ու ուժով են հնչում Եղիշե Չարենցի խոսքերը Կոմիտասի մասին.

Բայց հայրենի երկրում քո,
Մայր-քաղաքում նրա Հին,
Պատվանդանի վրա նոր
Եվ սրտերի վրա հիր՝
Ահա մարմինը քո սուրբ,
Իբրև մասունք զմռսած՝
Բարձրացել է վեհաշուք
Եվ բարձրաբերձ՝ իբրև սար...
Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք։

Այո, նա վերադարձավ հայրենիք, որ ապրի իր վերածնված ժողովրդի կյանքով, որ նրա հետ մեկտեղ իր հմայող հոգով խոյանա դեպի վեր, դեպի նրա սքանչելի գալիքը։ Նա վերադարձավ հայրենիք, որ հավիտյան ապրի մեր ապագա սերունդների սրտում։

Եվ այսօր մեր ժողովրդի հանճարեղ զավակի, հայոց երգի ամենափրկիչ մեծ Կոմիտասի հիշատակը հավերժացնող ամենավսեմ կոթողը դա մեր երախտագետ ժողովրդի անհուն սերն է։ Այդ կոթողի պատվանդանին անմահության կրակն է վառվում։

Հավե՜րժ փառք Կոմիտասին։